ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГЕВОРГ ВАРДАНОВИЧ БАРСЕГЯН

УГОЛОВНО-ПРАВОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание учёной степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – "Уголовное право и криминология, уголовно-исполнительное право"

ЕРЕВАН 2025

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ռազմիկի Մարգարյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սերգեյ Վահանի Առաքելյան**, իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Արման Համլետի Հովհաննիսյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Հայ-Ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի դեկտեմբերի 17-ին՝ 14^{30}-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель:	доктор юридических наук, профессор **Анна Размиковна Маргарян**
Официальные оппоненты:	доктор юридических наук, профессор **Сергей Ваганович Аракелян,** кандидат юридических наук, ассистент **Арман Гамлетович Оганнесян**
Ведущая организация:	**Российско-Армянский университет**

Защита состоится 17 декабря 2025 года в 14^{30} на заседании Специализированного совета КВОН РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1)

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 14 ноября 2025 года.

Ученный секретарь специализированного совета
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Օպերատիվ-հետախուզական գործունեությունը (այսուհետ՝ նաև ՕՀԳ) ավանդաբար ընկալվել է (գուցե նաև շարունակվում է ընկալվել) որպես փակ ոլորտ, որի վերաբերյալ գիտական հետազոտությունները սահմանափակվել են հետախուզական կամ քրեադատավարական ասպեկտով, թեև վերջին շրջանում օպերատիվ-հետախուզական գործունեության տեսությամբ զբաղվող հետազոտողներն ուրվագծում են իրավունքի առանձին համալիր ճյուղի ստեղծման անհրաժեշտությունը:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը միայն հետախուզական կամ քրեադատավարական դիտանկյունից հետազոտելն արդարացված չէ, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր քրեական իրավունքով (օրենքով) կարգավորման անհրաժեշտություն ունեն: Այդ հարցերի թվին են դասվում, մասնավորապես, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց) կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեաիրավական արձագանքման խնդիրները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հանցագործության պրովոկացիան, պրովոկատորի և պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման (լրամշակման և/կամ մշակման) հարցերը:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձինք օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվության կարող են չենթարկվել միայն քրեական օրենսգրքով նախատեսված լինելու պարագայում: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Քրեական օրենսգիրք կամ Օրենսգիրք) քննարկվող հարցի վերաբերյալ կարգավորումներ ունի, սակայն դրանք համակարգային և համապարփակ կերպով չեն կարգավորում այս հարցը: Որպես այդպիսի կարգավորում կարող ենք նշել Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածը, որը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք առանձնացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը:

Մինչդեռ, օպերատիվ-հետախուզական գործունեությունը առավել համապարփակ և մանրամասն քրեաիրավական կարգավորման կարիք ունի, ինչը սույն հետազոտության շրջանակում մենք անվանել ենք

«քրեաիրավական ապահովում»:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները և այդ մարմինների հետ համագործակցող անձինք էական դերակատարում ունեն հանցավորության դեմ պայքարում: Հիշատակված սուբյեկտները օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումներ իրականացնելիս հաճախ որդեգրում են հանցագործության հետ եզրային վարքագծային մոդել: Իրավաբանական գրականությունում անգամ նշվում է, որ կարող է տպավորություն ստեղծվել, թե օպերատիվ-հետախուզական գործունեությունն ունի «կիսաիրավական բնույթ»: ՕՀԳ իրականացնող անձանց կողմից այլ անձանց կատարվող/կատարած հանցավոր արարքների կանխարգելման կամ դրանց հետևանքների կանխման, հանցագործությունների բացահայտման կամ անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման ընթացքում ստեղծվում է քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրական հնարավորություն: Այն ենթադրում է ՕՀԳ իրականացնող անձի գործունեությունում (արարքում) ձևականորեն հանցավոր տարրի առկայություն: Հետևաբար, քրեական օրենքը պետք է նախատեսի իրավաչափության կոնկրետ պայմանների առկայության դեպքում ՕՀԳ իրականացնող անձին ձևականորեն հանցավոր համարվող արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ արարքում հակաիրավականության բացակայության և դրա՝ սոցիալապես օգտակար ու նպատակադրված լինելու հաշվառմամբ: Ակնհայտ է, որ խոսքը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի մասին է:

Քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության բացառմանը վերաբերող հարցերը ներպետական մակարդակում հետազոտված չեն: Առհասարակ, այս խնդրի հետազոտմանը նվիրված աշխատանքները, տարբեր պատճառներով պայմանավորված, սակավաթիվ են. հնարավոր է գտնել ատենախոսական և մենագրական մի քանի արժեքավոր աշխատանք, որոնք էլ և հիմք են ծառայել այս հետազոտության համար:

Քրեական օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները» վերտառությամբ 6-րդ գլխում տեղ գտած կարգավորումների հետազոտումը ցույց է տալիս, որ քննարկվող հարցը համապարփակ կերպով կարգավորված չէ, և մշակված չէ այնպիսի նորմ, որն ուղղված լինի ՕՀԳ քրեաիրավական ապահովման կարգավորող ուղղության համակողմանի ձևավորմանն ու կենսագործմանը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական համապարփակ ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղությունը ևս, որի ձևավորումը պետք է դրսևորվի Քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հանցակազմերի լրամշակման կամ մշակման տեսքով: ՀՀ քրեական օրենսդրության արդիականացման հնարավորությունների հետազոտումը և դրա իրավական մոդելավորումը՝ Քրեական օրենսգրքում հատուկ հանցակազմերի նախատեսման նպատակով, պետք է իրականացվի Հատուկ

մասի համապատասխան նորմերի հաշվառմամբ, որոնք ուղղված են օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը: Հետևաբար սույն աշխատանքում հետազոտման առարկա ենք նախ դարձրել Քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հանցակազմերը, որոնք ուղղված են օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանը: Երկրորդ, այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի հաշվառմամբ՝ ներկայացրել ենք օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանն ուղղված նոր հանցակազմերի նախատեսման առաջարկներ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական հատուկ հետաքրքրություն ունի նաև հանցագործության պրովոկացիայի իրավական էության ուսումնասիրումը, քանի որ օպերատիվ-հետախուզական գործունեության իրավաչափությունը գնահատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում օպերատիվ-հետախուզական իրավաչափ միջոցառումները տարանջատելու հանցագործության պրովոկացիայից:

Այսպիսով, ՕՀԳ իրականացնող անձանց կողմից ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեաիրավական արձագանքման խնդիրները, ՕՀՄ շրջանակներում հանցագործության պրովոկացիան, պրովոկատորի և պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցերը, ինչպես նաև ՕՀԳ՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման հարցերը վկայում են հետազոտվող թեմայի արժեքավոր և հրատապ լինելու մասին՝ պայմանավորելով հետազոտվող թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հիմնահարցերը համալիր և համապարփակ ուսումնասիրելն է, առկա խնդիրները վերհանելը և դրանց լուծման առաջարկներ ներկայացնելը:

Դրված նպատակներին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- մշակել ՕՀԳ քրեաիրավական ապահովման հասկացությունը և ուղղությունները,
- ուսումնասիրել ՕՀԳ քրեաիրավական ապահովման միջազգային և այլ պետությունների փորձը,
- հետազոտել ՕՀԳ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները,
- մշակել ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության պայմանները,
- հետազոտել ՕՀԳ ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման արդի հիմնախնդիրները,
- հետազոտել հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը, հատկանիշները և սահմանազատումը հանցակցությունից,
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների

լույսի ներքո ուսումնասիրել իրավաչափ ՕՀՄ-ների տարանջատումը հանցագործության պրովոկացիայից,

- հետազոտել հանցագործության պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված հարաբերություններն են: Հետազոտության առարկան ՕՀԳ քրեաիրավական ապահովման վերաբերյալ ներպետական, այլ պետությունների ու միջազգային իրավական նորմերն են, վերաբերելի իրավակիրառ պրակտիկան և հետազոտողների՝ ուսումնասիրվող թեմային նվիրված աշխատանքները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայկական մասնագիտական գրականությունում օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հիմնախնդիրները մինչ այժմ համալիր և համակարգային հետազոտման չեն ենթարկվել:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հիմնախնդիրները հետազոտման են ենթարկվել Յուրի Ժելեզնյակովի «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս հանցանք կատարած օպերատիվ-հետախուզական գործունեության սուբյեկտների քրեական պատասխանատվությունը» (2009թ.), Գենադի Շկաբինի «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը. տեսագործնական և օրենսդրական ասպեկտներ» (2018թ.), Վլադիմիր Իվենինի «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման կարգավորող և պաշտպանող ուղղությունները և դրանց կենսագործման միջոցները» (2021թ.) ատենախոսական աշխատություններում:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեաիրավական արձագանքման որոշ խնդիրներ հետազոտված են Փենսիլվանիայի համալսարանի իրավունքի դպրոցի պրոֆեսորներ Փոլ Ռոբինսոնի, Մեթյու Կուսմաուլի, Քամբեր Ստոդդարդի, Իլյա Ռուդյակի և Անդրեա Կուրսթենի «Ամերիկայի քրեական օրենսգիրք. պաշտպանության ընդհանուր միջոցներ» (2014թ.) հետազոտական աշխատանքում:

Հիշատակված հետազոտություններն իրապես արժեքավոր են և մեծ ներդրում են ունեցել քրեական իրավունքի գիտության զարգացման հարցում, սակայն հետազոտվող ոլորտում բազմաթիվ հիմնախնդիրներ համապարփակ և համալիր լուսաբանման ու ուսումնասիրման անհրաժեշտություն ունեն:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը կազմել են ՕՀԳ քրեաիրավական ապահովմանը վերաբերող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, միջազգային/վերպետական իրավական նորմերը, դատական պրակտիկայի նյութերը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի, Վերաքննիչ քրեական դատարանի, առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քրեական դատարանների և այլ պետությունների դատարանների դատական ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, ընդհանրացման, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության, համակարգակառուցվածքային և իրավական մոդելավորման մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը ներպետական իրավունքում խորքային և համապարփակ գիտահետազոտական առաջին աշխատանքն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համակարգված, համալիր և բազմակողմանի հետազոտելու օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսական և գործնական հիմնախնդիրները:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, եզրակացությունում, ինչպես նաև հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության և ներքին ու արտաքին ապակայունացնող միջամտությունից երաշխավորման նպատակով իրականացվող իրավաձևավորման գործընթացն ու արդյունքն է, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց գործունեության ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները կարգավորող քրեաիրավական նորմերի կենսագործումը:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության համապարփակ և ամբողջական կարգավորման, իրավական համակարգվածության (կոմպակտության), անհիմն տարբերակված մոտեցման բացառման, թափանցիկության ապահովման, ինչպես նաև քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասի իրավաչափության՝ քրեական օրենսգրքով սահմանված միատեսակ պայմանների նախատեսման տեսանկյունից նպատակադիր և արդարացված է ՕՀԳ իրականացնող անձի (ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի և ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող անձի) կողմից ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու վերաբերյալ կարգավորումներն ամրագրել Քրեական օրենսգրքի մեկ հոդվածում:

Այսպիսով, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 41. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը

1. Քրեական պատասխանատվության ենթակա չէ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով

պաշտպանվող շահերին վնաս պատճառած օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի դեմ ուղղված ավարտված հանցանք, առողջության դեմ ուղղված ծանր կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս սույն օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորվել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սադրելով:

4. Սույն հոդվածի իմաստով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ է համարվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձը»:

3. Քրեական պատասխանատվությունը բացառող մեր կողմից առաջարկված հանգամանքի բովանդակության հետազոտման արդյունքում կարելի է առանձնացնել այդ հանգամանքի իրավաչափության հետևյալ պայմանները՝

- քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս,
- վնասը պետք է պատճառվի օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից,
- վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում,
- պետք է բացակայեն այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները,
- պետք է պահպանված լինեն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի պատճառման սահմանները:

4. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների դեպքում, պայմանավորված դրանց էությամբ և բնույթով, վնասի պատճառման անհրաժեշտություն կարող է առաջանալ տարբեր գործոնների և

հանգամանքների ազդեցությամբ: Օրինակ, օպերատիվ ներդրման դեպքում պատճառվող վնասը կարելի է տարբերակել երկու տեսակի՝ *օժանդակողի* և *ուղեկցողի*:

Օժանդակող է համարվում այն վնասը, որն ուղղված է ՕՀՄ իրականացման ապահովմանը: Օպերատիվ ներդրման դեպքում այն կարող է պայմանավորված լինել երկու հանգամանքով՝ ներդրվող անձի համապատասխան կերպարի ստեղծման անհրաժեշտություն, ներդրված անձի ստեղծած կերպարի պահպանման անհրաժեշտություն:

Ուղեկցող է համարվում այն վնասը, որը պատճառվում է հենց ՕՀՄ իրականացմամբ: Օպերատիվ ներդրման դեպքում նման վնասը այն արարքների կատարմանը մասնակցել է, որոնց առնչությամբ իրականացվում է ՕՀՄ: Սա հնարավոր է այն դեպքում, երբ ներդրված անձն արդեն գտնվում է օպերատիվ ներդրման օբյեկտում և կատարում է հանցավոր կազմակերպության պլանից կամ դերաբաշխումից բխող արարքներ:

5. Օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման նպատակով առաջարկում ենք Քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հոդվածներում կատարել անհրաժեշտ լրացումներ և/կամ խմբագրումներ:

Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ ***«Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներ, փաստաթղթեր կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը»***:

Առաջարկում ենք 483-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ ***«Քրեական վարույթի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներ հրապարակելը***

1. Առանց իրավասու մարմնի կամ անձի թույլտվության՝ հրապարակման ոչ ենթակա՝ մինչդատական կամ դատական վարույթի, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալ հրապարակելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 426-րդ կամ 427-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝»:

Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «***Արդարադատության իրականացմանը, գործի քննությանը կամ <u>օպերատիվ-հետախուզական գործունեությանը</u> միջամտելը***

1. Արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը կամ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը, <u>ինչպես նաև որպես ինքնուրույն գործունեություն իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությանը</u> ցանկացած ձևով միջամտելը»:

Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «***Դատավորի,***

դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, <u>օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի</u>, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելը

Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, <u>օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի,</u> փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմին, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ՝»:

6. Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 478.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 478.1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կամ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ իրականացնելը՝

պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) շահադիտական դրդումներով, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, կամ

3) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով:»:

7. Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը ենթարկել էական վերափոխման՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ՝

«*Հոդված 477. Հանցագործության պրովոկացիան*

1. Հանցագործության պրովոկացիան՝ անձին հանցանքի կատարմանը սադրելը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կամ

3) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության պրովոկացնելով

պատժվում է պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. *Կաշառքի պրովոկացիա չի համարվում օրենքով սահմանված դեպքում առաքինության ստուգման նպատակով սույն հոդվածով նկարագրված արարքի կատարումը*»:

8. Պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձը միայն պրովոկացիայի ազդեցության հանգամանքով պայմանավորված չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից: Պրովոկատորի արարքները պայմաններ են ստեղծում մեկ այլ (պրովոկացված) անձի կողմից հանցանք կատարելու, սակայն պրովոկացված անձը հանցանքը կատարում է ինքնակամ, թեև, գտնվելով պրովոկատորի ազդեցության տակ: Այս տեսանկյունից պրովոկատոր-պրովոկացված անձ հարաբերությունները նման են դրդիչ-կատարող հարաբերություններին:

Հանցագործության պրովոկացիայի փաստը կարող է պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք լինել, հետևաբար պրովոկացիայի փաստը համապատասխան ապացույցների առկայության դեպքում դատարանի կողմից կարող է գնահատվել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք: Սակայն հանցագործության պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարելը իմպերատիվ կերպով չի կարող համարվել քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության թեմայի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում ներպետական իրավունքում առաջին անգամ մշակվել է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը նվիրված համալիր աշխատանք: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտությունների, ինչպես նաև այն դասընթացների շրջանակներում, որոնց առարկան առնչվում է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը:

Հետազոտության թեմայի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները, վերլուծությունները, ներկայացված առաջարկները

և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեությունում, ինչպես նաև նպաստել դատական և դատախազաքննչական պրակտիկայի կատարելագործմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի՝ հրապարակված թվով 7 հոդվածներում: Հետազոտության արդյունքները հեղինակի կողմից ներկայացվել են նաև գիտաժողովներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ներառված 8 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, մշակվածության աստիճանը, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ «**Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման էությունը և արդի հիմնախնդիրները**» վերտառությամբ 1-ին գլխի՝ «*Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հասկացությունը և ուղղությունների հակիրճ բնութագիրը*» վերտառությամբ 1-ին պարագրաֆը ներածական բնույթ է կրում և ուրվագծում հետազոտության ուղղվածությունը: Այս պարագրաֆում հետազոտվել են օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հասկացությունը և ապահովման ուղղությունների հակիրճ բնութագիրը:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «*Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման միջազգային և այլ պետությունների փորձը*» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հետազոտվել են միջազգային/վերպետական իրավական ակտերում և այլ պետությունների քրեական օրենսդրություններում տեղ գտած, օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված վերաբերելի կարգավորումները: Իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական կարգավորման առկա ընդհանուր վիճակի վերաբերյալ, ինչպես նաև թույլ են տալիս ըմբռնել դրա զարգացման միտումները՝ այդպիսով ուրվագծելով նաև ներպետական օրենսդրության կարգավորումների արդիականացման և իրավական մոդելավորման հեռանկարը:

Ատենախոսության՝ «**Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման ուղղությունները**» վերտառությամբ 2-րդ գլխի՝

«*Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները*» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հետազոտվել են քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափության կոնկրետ պայմանների առկայությամբ վնաս պատճառելու դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության բացառման արդի հիմնախնդիրները: Իրականացված հետազոտության արդյունքներով առաջարկվել է Քրեական օրենսգրքում ամրագրել համալիր նորմ՝ «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը» վերտառությամբ, որն ուղղված կլինի քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափության կոնկրետ պայմանների առկայությամբ վնաս պատճառելու դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության բացառմանը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «*Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության պայմանները*» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հետազոտման են ենթարկվել մեր կողմից առաջարկված, «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը» վերտառությունը կրող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները: Քրեական պատասխանատվությունը բացառող այս հանգամանքի առաջարկվող բովանդակության հետազոտման արդյունքում առանձնացվել են այդ հանգամանքի իրավաչափության կոնկրետ պայմանները, որոնց էությունն էլ առանձին մանրամասն հետազոտման է ենթարկվել:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «*Օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման արդի հիմնախնդիրները*» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղության ձևավորման և/կամ կատարելագործման նպատակով հետազոտվել են Քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված համապատասխան հանցակազմերի լրամշակմանը և, ըստ անհրաժեշտության, նոր հանցակազմերի մշակմանը վերաբերող հարցերը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ արձագանքելու օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման դեմ ուղղված արարքներին: Իրականացված հետազոտության արդյունքներով ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված Քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածների լրամշակմանը և «Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը» վերտառությամբ նոր հոդվածի նախատեսմանը:

Ատենախոսության՝ «**Հանցագործության պրովոկացիան օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման համատեքստում**» վերտառությամբ 3-րդ գլխի՝ «*Հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը և հատկանիշները, սահմանազատումը*

հանցակցությունից» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հանցագործության պրովոկացիայի քրեականացման հիմնավոր առաջարկ ներկայացնելու նպատակով մանրամասն հետազոտման են ենթարկվել հանցագործության պրովոկացիայի հատկանիշները և հանցակցության ինստիտուտից դրա սահմանազատման առանցքային չափանիշները: Առանձին քննարկման առարկա են դարձել հանցագործության պրովոկացիայի՝ որպես առաջարկվող հանցակազմի տարրերը (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) և հանցագործության ավարտման պահի առանձնահատկությունները: Իրականացված հետազոտության արդյունքում հոդվածում առաջարկվել է այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի հաշվառմամբ համապարփակ քրեականացման ենթարկել հանցագործության պրովոկացիան: Միևնույն ժամանակ, արժևորելով իրավաչափ պրովոկացիան՝ առաջարկվել է ամրագրել քրեաիրավական նորմ, որով այն կհամարվի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «*Իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումների տարանջատումը հանցագործության պրովոկացիայից. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշները*» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հետազոտվել են օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների իրավաչափության և օրինականության վիճարկման հարցերով Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված դիմումների քննության արդյունքներով Դատարանի ձևակերպած չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները տարանջատելու հանցագործության պրովոկացիայից: Այդ չափանիշների բովանդակության հաշվառմամբ՝ դրանք պայմանականորեն դասակարգվել են որոշակի խմբերի:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «*Հանցագործության պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականը*» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հետզոտվել են պրովոկատորի արարքի որակման առանձնահատկությունները այն դեպքերում, երբ պրովոկացիայի ազդեցությամբ պրովոկացված անձը պրովոկացված հանցագործությունից բացի այլ հանցանք է կատարում, ինչը գիտակցվում է պրովոկատորի կողմից: Պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականին վերաբերող հարցերը, հանցագործության պրովոկացիայի՝ պրովոկացիայի ենթարկված անձի քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք լինելու հնարավորությունը և նպատակադրությունը:

Ատենախոսության **եզրակացությունում**, ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները:

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը միայն հետախուզական կամ քրեադատավարական դիտանկյունից հետազոտելն արդարացված չէ, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր քրեական իրավունքով (օրենքով) կարգավորման անհրաժեշտություն ունեն: Այդ հարցերի թվին են դասվում,

մասնավորապես,

- օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց) կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեաիրավական արձագանքման խնդիրները,
- օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հանցագործության պրովոկացիան,
- պրովոկատորի և պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցերը,
- օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման (լրամշակման և/կամ մշակման) հարցերը:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման միջոցները Քրեական օրենսգրքի Ընդհանուր և Հատուկ մասի՝ ՕՀԳ իրականացման շրջականներում ձևավորվող հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմերի ամբողջությունն է:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման առաջարկվող սահմանումից հետևում է, որ ՕՀԳ քրեաիրավական ապահովումն ունի կարգավորող և պաշտպանող ուղղություններ՝ քրեական օրենսդրության խնդիրներին, մեթոդներին ու միջոցներին համապատասխան: Այս ուղղությունները փոխկապակցված և փոխլրացնող մեխանիզմներ են, որոնցից առաջինի՝ կարգավորող ուղղության ձևավորումը հիմնականում պետք է արտահայտվի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվությունը բացառող նորմի մշակմամբ, իսկ երկրորդի՝ պաշտպանող ուղղության ձևավորումը՝ պետք է դրսևորվի Հատուկ մասի հանցակազմերի լրամշակման կամ մշակման տեսքով:

4. ՕՀԳ իրականացնող անձանց կողմից այլ անձանց կատարվող/կատարած հանցավոր ոտնձգությունների կանխարգելման կամ դրանց հետևանքների կանխման, հանցագործությունների բացահայտման կամ անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման ընթացքում ստեղծվում է օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրական հնարավորություն: Այն ենթադրում է ՕՀԳ իրականացնող անձի գործունեությունում (արարքում) ձևականորեն հանցավոր տարրի առկայություն: Հետևաբար, քրեական օրենքը պետք է նախատեսի իրավաչափության կոնկրետ պայմանների առկայության դեպքում ՕՀԳ իրականացնող անձին ձևականորեն հանցավոր համարվող արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ արարքում հակահիրավականության բացակայության և դրա՝ սոցիալապես օգտակար ու նպատակադրված լինելու հաշվառմամբ:

5. Քրեական օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունը

բացառող հանգամանքները» վերտառությամբ 6-րդ գլխում տեղ գտած կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող հարցը համապարփակ կերպով կարգավորված չէ, և մշակված չէ այնպիսի համալիր նորմ, որն ուղղված լինի ՕՀԳ քրեաիրավական ապահովման կարգավորող ուղղության ամբողջական կարգավորմանն ու կենսագործմանը:

6. Ներպետական քրեական օրենսդրության զարգացման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական պատասխանատվությունը բացառող ներկայում առկա հանգամանքները բխում են անհրաժեշտ պաշտպանությունից կամ ծայրահեղ անհրաժեշտությունից: Իրավակիրառ անհրաժեշտությամբ պայմանավորված ձևավորվել են քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքներ: Օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքերը առաջացել են ծայրահեղ անհրաժեշտությունից և, ժամանակի ընթացքում հասունանալով, վերածվել են իրավաբանորեն անկախ հանգամանքների:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքը պետք է մոդելավորվի ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էության, ինչպես նաև իրավական որոշակիության (կանխատեսելիության) սկզբունքի հաշվառմամբ:

7. Դատական պրակտիկայի ամփոփումը հիմք է տալիս պնդելու, որ դատարանները չեն անդրադառնում ՕՀԳ իրականացնող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքներին՝ դրանք առանց բավարար իրավական հիմքերի և հիմնավորումների, կարծես թե, համարելով իրավաչափ կամ անտեսելով: Մինչդեռ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքները կարող են իրավաչափ համարվել Քրեական օրենսգրքով ամրագրված քրեական պատասխանատվությունը բացառող կիրառելի հանգամանքի առկայության պարագայում միայն:

8. «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը» վերտառությամբ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի բովանդակության ուսումնասիրումից պարզ է դառնում, որ այն կարգավորում է միայն համագործակցող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվության չենթարկելու հարցերը՝ դուրս թողնելով միևնույն պայմաններում և հանգամանքներում գործող ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվության չենթարկելու հարցերը: Այլ խոսքերով՝ քննարկվող հանգամանքը, ուղղված լինելով օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը, այն իրականացրել է թերի և մասնակի:

9. Քրեական պատասխանատվությունը բացառող ցանկացած հանգամանքի կիրառելիությունը փաստելու համար պետք է հաստատել այդ հանգամանքի իրավաչափության պայմանների առկայությունը: Մենք դիտարկել և հետազոտության առարկա ենք դարձրել այս աշխատանքում

մեր կողմից առաջարկված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները:

10. Քրեական պատասխանատվությունը բացառող մեր կողմից առաջարկված հանգամանքի իրավաչափության առաջին պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս:

10.1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը և օպերատիվ-հետախուզական միջոցառումը որպես երևույթներ գտնվում են ամբողջի և մասի հարաբերակցության մեջ, որտեղ ամբողջը օպերատիվ-հետախուզական գործունեությունն է, իսկ մասը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումը: Շարադրվածից հետևում է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս կարող է պատճառվել միայն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեության՝ որպես երևույթի արտահայտման ձևը օպերատիվ-հետախուզական միջոցառումն է:

10.2. Իրավաչափության առաջին պայմանի համատեքստում հետազոտման առանձին առարկա է «վնաս» հասկացության քրեաիրավական ընկալումը: Այս հասկացությունը, մեր կարծիքով, չունի կոնկրետ ճյուղային պատկանելիություն և օգտագործվում է մեծաքանակ իրավական ակտերում՝ անգամ Սահմանադրությունում:

10.3. «Վնասը» քրեական իրավունքում միայն բացասական իմաստով ընկալելը ճիշտ չէ: Տարբեր հանգամանքների և գործոնների (այդ թվում՝ պետության կամ հասարակության օրինական շահերի) հաշվառմամբ՝ վնասի բովանդակությունը կարող է նաև դրականորեն ընկալվել: Վնասի սոցիալական էությամբ և բնույթով պայմանավորված՝ այն քրեական իրավունքում կարող է դասակարգվել հանցավորի և ոչ հանցավորի: Ոչ հանցավոր վնասն էլ, վնասի սոցիալական և ձևական չափանիշների հաշվառմամբ, դասակարգվում է երկու խմբի՝ ձևականորեն ոչ հանցավոր վնաս և իրավաչափ վնաս:

10.4. Ձևականորեն ոչ հանցավոր վնասը իր բնույթով մոտ է հանցավոր վնասին, սակայն ձևականորեն ամրագրված որևէ հանգամանքի առկայության կամ բացակայության հիմքով արարքը հանցանք, հետևաբար՝ վնասը հանցավոր չի համարվում:

10.5. Իրավաչափ վնասը, ի տարբերություն ձևականորեն ոչ հանցավոր վնասի, ունի դրական նշանակություն: Սոցիալական բովանդակության դիտանկյունից այն ընդունված է անվանել սոցիալապես թույլատրելի կամ հանրորեն օգտակար:

10.6. Քննարկվող իրավաչափության պայմանի էական հանգամանքներից է այն իրադրությունը, որի պայմաններում ՕՀՄ իրականացման ժամանակ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում: Արարքին քրեաիրավական ստույգ գնահատական տալու տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն:

11. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի իրավաչափության երկրորդ պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի օրենքով

սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից:

11.1. Միջազգային ընդունված չափանիշներին և պահանջներին համապատասխան՝ առաջարկել ենք ՕՀԳ իրականացնող անձ համարել ինչպես օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցին, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձին:

12. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի իրավաչափության երրորդ պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում:

12.1. Տրված հանձնարարության մասին ուղղակիորեն նշված է Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում՝ ինչպես գործող, այնպես էլ մեր կողմից առաջարկվող տարբերակում: Հանձնարարության առկայությունը՝ որպես քննարկվող հանգամանքի իրավաչափության պայման, առանձնացվում և կարևորվում է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ասպեկտներին նվիրված գրեթե բոլոր հետազոտություններում:

12.2. Կարևոր ենք համարել հետազոտության առարկա դարձնել հանձնարարության արտահայտման ձևը՝ գրավոր կամ բանավոր լինելը: Քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածը որևէ նշում չունի հանձնարարության արտահայտման ձևի վերաբերյալ, ինչից և կարելի է ենթադրել, որ այն կարող է լինել թե՞ գրավոր, թե՞ բանավոր: Բնականաբար տրված հանձնարարության սահմանները հստակորեն որոշելը ավելի հեշտ կլինի գրավոր հանձնարարության առկայության դեպքում, սակայն օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով պայմանավորված չպետք է բացառել բանավոր հանձնարարության հնարավորությունը ևս:

12.3. Հանձնարարականը պետք է տրված լինի կոնկրետ նպատակով, այն է հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը:

13. Իրավաչափության չորրորդ պայմանն այն է, որ պետք է բացակայեն հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակին հասնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները:

13.1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքը պետք է մոդելավորվի ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էության, ինչպես նաև իրավական որոշակիության (կանխատեսելիության) սկզբունքի հաշվառմամբ: Հետևաբար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայության վերաբերյալ նշումը բխում է ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված

ռիսկի իրավական էությունից:

14. Քրեական պատասխանատվությունը բացառող մեր կողմից առաջարկված հանգամանքի iրավաչափության վերջին՝ հինգերորդ պարտադիր պայմանը օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի սահմանների պահպանումն է:

14.1. Սույն ատենախոսության շրջանակներում մեր կողմից ձևակերպած, «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը» վերտառությունը կրող հանգամանքի բովանդակությունը պահանջում է իրավաչափ վնասի սահմանների որոշում: Այլ խոսքերով՝ պետք է հնարավորինս հստակորեն ուրվագծվեն այն սահմանները, որի շրջանակներում ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասը կհամարվի իրավաչափ: Իրավաչափ վնասի սահմանները որոշելու համար մենք ելակետ ենք ընդունել ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակը, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը:

14.2. Իրավաչափության այս պայմանի հետազոտման համատեքստում աներկբա արձանագրման է ենթակա այն հանգամանքը, որ ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանող շահերին վնաս պատճառած ՕՀԳ իրականացնող անձը քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի անկախ դասակարգման խմբից ցանկացած հանցանքի կատարման համար, որը պայմանավորված չի եղել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի կոնկրետ նպատակով՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով: Այսինքն, անկախ հանցանքի ծանրության աստիճանից ՕՀԳ իրականացնող անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած հանցանքը պայմանավորված չի եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով: Եվ հակառակը, անկախ հանցանքի ծանրության աստիճանից ՕՀԳ իրականացնող անձը չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած արարքը պայմանավորված է եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

14.3. Իրավաչափության այս պայմանի հետազոտման արդյունքներով՝ առաջարկել ենք Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի դեմ ուղղված ավարտված հանցանք, առողջության դեմ ուղղված ծանր կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու*

նպատակով»:

14.4. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի մասին հետազոտություններ իրականացնելիս հեղինակները որպես այս հանգամանքի իրավաչափության պայման երբեմն նշում են սահմանազանցման բացակայության մասին: Սակայն, մեր կարծիքով, «սահմանազանցում» տերմինը այս հանգամանքի պարագայում կիրառելի չէ, քանզի, օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով, դրանց իրականացման ժամանակ ստեղծված էքստրեմալ իրադրությունով պայմանավորված, գործնականում հաճախ անհնար է լինելու որոշել՝ արդյո՞ք կանխված վնասի համեմատությամբ ավելի փոքր վնաս է պատճառվել, թե ոչ: Բացի դրանից, «սահմանազանցում» տերմինը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների համատեքստում մշտապես ընկալվում է սահմանները գերազանցելու իմաստով: Մինչդեռ, մեր կարծիքով, ցանկացած հանցանք կատարելը՝ անկախ այն հանգամանքից գերազանցել է սահմանները, թե ոչ (պատճառել է ավելի թեթև վնաս), պետք է հանգեցնի ՕՀԳ իրականացնող անձի քրեական պատասխանատվության, եթե պայմանավորված չի եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

14.5. Գիտագործնական հետաքրքրություն են ներկայացնում նաև այն դեպքերը, երբ օպերատիվ գործակալները իրենց ինքնության բացահայտման վտանգով կամ բացահայտումից բխող հետևանքներով պայմանավորված կյանքից զրկում են իրենց բացահայտած անձանց, որոնց կապակցությամբ իրականացվում էր ՕՀՄ, կամ այդ անձանց առողջությանը կամ գույքին վնաս են պատճառում: Կարծում ենք, որ նմանատիպ իրավիճակները չեն կարող դիտարկվել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի տիրույթում, այլ դրանց գնահատական պետք է տրվի անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կարգավորումների տիրույթում:

14.6. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, երբ կոնկրետ արարքին գնահատական պետք է տրվի հակահիրավական արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու վերաբերյալ կարգավորումների տիրույթում:

15. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեահիրավական ապահովմանն ուղղված ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած հանցակազմերի հետազոտումից ակնհայտ է դարձել, որ այդ հանցակազմերը ՕՀԳ քրեահիրավական ապահովումն իրականացնում են մասնակի՝ ՕՀԳ՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված արարքները քրեահիրավական գնահատականի արժանացնելով միայն այն դեպքում, երբ ՕՀՄ իրականացվում է նախաձեռնված քրեական վարույթով՝ հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն: Այսպիսի մոտեցումը անարդարացի և ոչ իրավաչափ համարելով՝ մենք առաջարկել ենք համապատասխան հոդվածներում լրացումներ կատարելու միջոցով իրականացնել ՕՀԳ քրեահիրավական համապարփակ ապահովում: Այլ խոսքերով՝ իրականացնել և՞ որպես ինքնուրույն գործունեություն, և՞

որպես նախաձեռնված քրեական վարույթով հետաքննության շրջանակներում իրականացվող ՕՀՄ, հետևաբար նաև ՕՀԳ քրեաիրավական ապահովում:

16. Իրականացված հետազոտության արդյունքում եկել ենք այն փաստարկված եզրահանգման, որ հանցագործության պրովոկացիան չի կարելի դիտարկել հանցակցության ինստիտուտի շրջանակներում, և ներկայացրել ենք հանցագործության պրովոկացիայի և հանցակցության էական տարբերակիչ հատկանիշները:

17. ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի կողմից հանցագործության պրովոկացիա իրականացվելու դեպքում արարքը չի կարող որակվել պաշտոնական լիազորությունները անցնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիան կատարվում է հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հատուկ նպատակով՝ պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով:

Պրովոկատորի արարքը միայն հանցագործության պրովոկացիայի առկայության դեպքում չի կարող որակվել նաև ապացույց կեղծելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ միայն հանցագործության պրովոկացիա իրականացնելով պրովոկատորը ապացույց չի կեղծում կամ կեղծ ապացույց չի ներկայացնում, այլ միայն անձին սադրում է հանցանքի կատարմանը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Պրովոկատորի արարքը չի կարող որակվել նաև Քրեական օրենսգրքի՝ «Հանցագործության մասին չհայտնելու» վերտառությամբ 473-րդ հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիայի նպատակը անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելն է, մինչդեռ հանցագործության մասին չհայտնելու նպատակը, ըստ էության, հանցանք կատարած անձին կամա, թե ակամա աջակցելն է, նրա անձի կամ հանցագործության բացահայտմանը խոչընդոտելը:

18. Պրովոկացիայի հետևանքով պրովոկացված անձի կողմից հանցանք կատարելու դեպքում պրովոկատորը, հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության ենթարկվելուց բացի, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի նաև այն հանցագործության դրդչության կամ կազմակերպման համար, որին պրովոկացրել (ըստ էության՝ դրդել) էր, եթե պրովոկատորը գիտակցել է պրովոկացված անձի կողմից այդ հանցանքը կատարելու հանգամանքը:

19. Պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարելու հանգամանքի գիտակցման արդյունքում հանցակից դարձած պրովոկատոր և պրովոկացիայի ենթարկված անձ-պրովոկացված հանցանքի կատարող հարաբերությունների նկատմամբ, մեր կարծիքով, կիրառելի են նաև հանցակցի սահմանազանցման վերաբերյալ կարգավորումները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Գագիկ Ղազինյան, Գևորգ Բարսեղյան «Իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումների տարանջատումը հանցագործության պրովոկացիայից. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշները», Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2024, Vol. 15, № 2 (41), դեկտեմբեր, էջեր 6-22,
2. Gevorg Barseghyan "The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions", State and Law, Yerevan, 2024, № 2 (99), pages 162-173,
3. Գևորգ Բարսեղյան «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները», Դատական իշխանություն, Երևան, հունվար-մարտ 2025, № 1-3 (307-309), էջեր 100-118,
4. Գևորգ Բարսեղյան «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման միջազգային և այլ պետությունների փորձը», Գիտական Արցախ, Երևան, 2025, № 1 (24), էջեր 22-41,
5. Գևորգ Բարսեղյան «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության պայմանները», Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2025, Vol. 16, № 1 (42), հունիս, էջեր 74-104,
6. Գևորգ Բարսեղյան «Օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման արդի հիմնախնդիրները», Օրինականություն, Երևան, 2025, № 137, էջեր 269-292,
7. Գևորգ Բարսեղյան «Հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը. հանցագործության իրավաչափ պրովոկացիա. պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականը», ՀՀ սահմանադրական դատարան. տեղեկագիր, Երևան, 2025, № 3 (120), էջեր 117-141:

ГЕВОРГ ВАРДАНОВИЧ БАРСЕГЯН

УГОЛОВНО-ПРАВОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

РЕЗЮМЕ

Оперативно-розыскная деятельность традиционно воспринималась (а возможно, и до сих пор воспринимается) как закрытая сфера, исследования которой ограничивались разведывательными или уголовно-процессуальными аспектами, хотя в последнее время исследователи, занимающиеся теорией оперативно-розыскной деятельности, обозначают необходимость формирования самостоятельной комплексной отрасли права.

Исследование оперативно-розыскной деятельности исключительно с разведывательной или уголовно-процессуальной точки зрения не является оправданным, поскольку ряд вопросов, связанных с оперативно-розыскной деятельностью, требует уголовно-правового (законодательного) регулирования.

К числу таких вопросов относятся, в частности,

- проблемы уголовно-правовой реакции в случаях, когда лица, осуществляющие оперативно-розыскную деятельность (сотрудники органов, выполняющих оперативно-розыскную деятельность, либо лица, сотрудничающие с ними), причиняют вред интересам, охраняемым уголовным законом, при проведении оперативно-розыскных мероприятий;
- вопросы провокации преступления в рамках оперативно-розыскных мероприятий;
- вопросы уголовной ответственности провокатора и лица, совершившего преступление в результате провокации,
- а также вопросы правового моделирования (доработки и/или разработки) составов преступлений, направленных на обеспечение осуществления оперативно-розыскной деятельности в установленном законом порядке.

Оперативно-розыскная деятельность требует более всестороннего и детального уголовно-правового регулирования, что в рамках данного исследования мы определяем как «уголовно-правовое обеспечение».

Объект и предмет исследования рассматривались с применением как общенаучных, так и специальных методов научного познания, таких как анализ, синтез, индукция, дедукция, обобщение, сравнительно-правовой, логико-аналитический, системно-структурный и метод правового моделирования.

Научная новизна диссертации отражена в выносимых на защиту положениях, в заключении, а также в теоретических обобщениях и научно-практических предложениях, сформулированных автором. Полученные результаты могут быть использованы в дальнейших научных исследованиях, а также в рамках учебных курсов, предмет которых связан с уголовно-правовым обеспечением оперативно-розыскной деятельности.

Проведённые исследования, анализы, представленные предложения и их обоснования могут быть использованы в правотворческой деятельности, а также способствовать совершенствованию судебной и прокурорско-следственной практики.

Диссертация выполнена на кафедре уголовного права юридического факультета Ереванского государственного университета. Результаты исследования отражены в 7 (семи) опубликованных статьях автора. Кроме того, результаты исследования были представлены автором на научных конференциях.

GEVORG BARSEGHYAN

CRIMINAL-LEGAL PROVISION OF OPERATIONAL-SEARCH ACTIVITIES

RESUME

Operational-search activity has traditionally been perceived (and perhaps continues to be perceived) as a restricted sphere, the study of which was limited to intelligence or criminal-procedural issues. However, in recent years, researchers interested in the theory of operational-search activity have emphasized the need to form an independent, complex branch of law.

Research of operational-search activity exclusively from an intelligence or criminal-procedural perspective is not justified, since several issues related to this activity require criminal-law (legislative) regulation.

Such issues cover, in particular:

- the problems of criminal-legal response in cases where persons conducting operational-search activities (employees of bodies carrying out such activities, or individuals cooperating with them) cause harm to interests protected by criminal law in the course of operational-search measures;
- the issue of provocation of a crime within the framework of such activities;
- issues of criminal liability of the provocateur and of the person who committed a crime based on provocation;
- issues of legal modeling (revision and/or development) of criminal-legal provisions aimed at ensuring the lawful implementation of operational-search activity.

Operational-search activity requires more comprehensive and detailed criminal-legal regulation, which, within the framework of this study, we define as “criminal-legal provision.”

The object and subject of the study were examined through the application of both general scientific and special methods of scientific cognition, such as

analysis, synthesis, induction, deduction, generalization, comparative-legal, logical-analytical, system-structural, and legal modeling methods.

The scientific novelty of the dissertation is reflected in the propositions submitted for defense, in the conclusion, as well as in the theoretical generalizations and scientific-practical proposals formulated by the author. The results obtained may be used in further scientific research, as well as in academic courses dealing with the criminal-law support of operational-search activity.

The conducted research, analyses, and the presented proposals with their justifications can be used in law-making activity and may contribute to the improvement of judicial and prosecutorial-investigative practice.

The dissertation was carried out at the Chair of Criminal Law of the Faculty of Law of Yerevan State University. The research results are reflected in seven published articles by the author. In addition, the results of the study were presented by the author at scientific conferences.